ԳՆՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ և ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ
ԾՐԱԳԻՐ NO. P175023

Հայաստանի Հանրապետությունը դիմել է Համաշխարհային բանկին 7,400,000 (Յոթ միլիոն չորս հարյուր հազար) ԱՄՆ դոլարի չափով ֆինանսավորում ստանալու նպատակով՝ «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի ծախսերը հոգալու համար և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը ծրագրի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ու խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու համար: Ծրագիրը համաֆինանսավորվելու է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Կառավարության կողմից:

Ծրագիրը ներառում է հետևյալ գնումները.

Աշխատանքներ

- *Վայոց Ձորի ԲԿ-ի կառուցման շինարարական աշխատանքների գնում (բաց ընթացակարգով, տեղական շուկայի կողմնորոշմամբ)*

Ապրանքներ

- *Մարտունու ԲԿ-ի համար բժշկական սարքավորումների, կահույքի և այլ պարագաների գնում (բաց ընթացակարգով, տեղական շուկայի կողմնորոշմամբ)*
- *Վայոց Ձորի ԲԿ-ի համար բժշկական սարքավորումների, կահույքի և այլ պարագաների գնում (բաց ընթացակարգով, միջազգային շուկայի կողմնորոշմամբ)*

Ծառայություններ

- *Վայոց Ձորի ԲԿ-ի կառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողություն (բաց ընթացակարգով, տեղական շուկայի կողմնորոշմամբ)*
- *Տեղական խորհրդատվություն՝ ծրագրի բաղադրիչի իրականացման համար (Անհատ խորհրդատուներ) (բաց ընթացակարգով, տեղական շուկայի կողմնորոշմամբ)*
- *Ծրագրի ֆինանսական աուդիտ (բաց ընթացակարգով, տեղական շուկայի կողմնորոշմամբ)*

Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրերի գնումները իրականացվելու են համաձայն **«Համաշխարհային Բանկի գնումների կանոնակարգեր ՆԾՖ փոխառուների համար/ «World Bank Procurement Regulations for IPF Borrowers» [հուլիս 2016թ., վերանայված նոյեմբեր 2017 և օգոստոս 2018]** («Գնումների կանոնակարգեր») ընթացակարգերի և բաց կլինեն բոլոր իրավասու կազմակերպությունների ու անհատների համար՝ համաձայն Գնումների Կանոնակարգերի: Ծրագրի բանակցություններից հետո Համաշխարհային Բանկն իր հավանությունը տալուն պես իր կայքում կհրապարակի նախնական համաձայնեցված գնումների պլանը և դրա հետագա վերանայված տարբերակները:

Գնումների հատուկ ծանուցումները բաց միջազգային մրցակցային ընթացակարգով գնման ենթակա պայմանագրերի վերաբերյալ, հասանելի դառնալու պահից, կտեղադրվեն UN Development Business առցանց հարթակում, Համաշխարհային Բանկի կայքում և ՀՀ ֆինանսների նախարարության գնումների կայքում՝ www.procurement.am:

Գնումների հատուկ ծանուցումները բաց ազգային մրցակցային ընթացակարգով գնման ենթակա պայմանագրերի վերաբերյալ, հասանելի դառնալու պահից, կտեղադրվեն www.armeps.am և www.procurement.am կայքերում: Ազգային մրցույթների ժամանակ Հայտեր Ներկայացնելու Հրավերը կներկայացվի էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (www.armeps.am):

Շահագրգիռ իրավասու կազմակերպությունները և անհատները, որոնք ցանկանում են հայտ ներկայացնել վերոնշյալ ծրագրի համար ապրանքների, աշխատանքների, ոչ-խորհրդատվական և խորհրդատվական ծառայությունների մատակարարման համար, կամ նրանք, ում անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկատվություն ստանալ, պետք է կապ հաստատեն Պատվիրատուի հետ հետևյալ հասցեով՝

ՀՀ Առողջապահության Նախարարության «Առողջապահական ծրագրերի
իրականացման գրասենյակ» Պետական Հիմնարկ
Կոմիտասի 49/4, ք. Երևան, 0051, ՀՀ
Հեռ. (+374 10) 29 75 36, (+374 10) 29 75 37
Էլ. Փոստ՝ info@healthpiu.am, kristine.ghambaryan@healthpiu.am
www.healthpiu.am